DOI: 10.54503/1829-4324.2023.1-99

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ. ՀՀ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արսեն Սլավիկի Ըռքոյան
Լևոն Աշոտի Հովնանյան

Հոդվածը ստացվել է՝ 03.02.23, ուղարկվել է գրախոսման՝ 03.03.23, երաշխավորվել է տպագրության՝ 08.05.23

Ներածություն: 2020թ. սկզբից սկսած ամբողջ աշխարհում տնտեսական աճի տեմպերը ենթարկվել են չկանխատեսված և անկանոն փոփոխությունների: Տարածաշրջանային երկրների և ՀՀ-ի համար այդ փոփոխությունների անկանխատեսելիությունն ավելի արտահայտված է եղել՝ պայմանավորված մի շարք գործոններով: Այս համատեքստում անհրաժեշտ է բացահայտել և կարևորություն տալ այն գործոններին, որոնք առավել մեծ ազդեցություն կարող են ունենալ ՀՀ տնտեսական աճի վրա և հնարավորություն է ընձեռնում առավել արագ արձագանքել փոփոխություններին և վերադարձնել նախահամաճարակային և նախապատերազմական տնտեսական աճի տեմպերը, հաղթահարել դրանց հետևանքները: Նման իրավիճակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք կարող են կործանարար լինել ոչ միայն զարգացող, այնպես էլ զարգացած երկրների տնտեսական համակարգերի համար: Եթե հաշվի առնենք վերջին երեք տարիներին համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցած փոփոխությունները, տարածաշրջանային լարվածությունը, ՀՀ տնտեսության սերտ կապերը Ռուս-Ուկրաինական հակամարտության տարբեր կողմերի հետ, ապա ՀՀ տնտեսական աճի վրա ազդող գործոնների հետ կապված անորոշությունը բավականին մեծ է նույնիսկ կարճաժամկետում: Սույն համատեքստում տնտեսական աճի վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը և վերլուծությունը մեծ կարևորություն ունի ՀՀ-ի համար, հետևապես այն խիստ **արդիական** է:

Հետազոտական աշխատանքի **նպատակն է** բացահայտել, թե ՀՀ-ում մարդկային կապիտալի զարգացումը ինչ չափով է կարևորվում, արդյո՞ք այն դրական ազդեցություն ունի ՀՀ տնտեսական աճի վրա: Այդ նպատակի իրականացման համար **խնդիր է դրվել** հետազոտել ՀՀ մարդկային կապիտալին վերաբերող ցուցանիշները, այդ ցուցանիշներից որոշները համեմատել տարածաշրջանային մի շարք երկրների ցուցանիշների հետ, վերլուծության արդյունքում ստանալ քանակական և որակական գնահատականներ:

Գրականության վերլուծություն: Տնտեսական աճին վերաբերող հետազոտությունների ուսումնասիրությունում տարբեր տնտեսագետներ ներկայացրել են տարբեր բնութագրեր և տվել են տարբեր մեկնաբանություններ: Օրինակ՝ Ս. Դասի և այլոց կողմից ներկայացված հետազոտությունում առաջնայնություն է տրվում տնտեսական աճի երկգործոնային (կամ տնտեսական աճի երկու հատ-

վածների բաժանման) մոդելին[1]: Ավելի վաղ Ա. Լյուիսը նշել է, որ զարգացող տնտեսությունները դրսևորում են դուալիզմ, որտեղ երկու սկզբունքորեն տարբեր կառուցվածք ունեցող տնտեսություններ կարող են գործել միևնույն երկրի ներսում[2]: Մի տնտեսությունը գործում է ավանդական հատվածում՝ օգտագործելով տարրական արտադրության տեխնոլոգիաներ, որոնք մեծապես հիմնված են հումքի, բնական ռեսուրսների և հողի վրա, մյուսը ժամանակակից՝ օգտագործելով առաջադեմ տեխնոլոգիաներ, որոնք մեծապես հենվում են հմուտ աշխատուժի և մարդկային կապիտալի վրա: Ավանդական հատվածը համարվում է գյուղական, իսկ ժամանակակից հատվածը քաղաքային է: Միաժամանակ հեղինակների կողմից նշվում է, որ օրինակ գյուղմթերքը կարելի է արտադրել և՛ ավանդական, և՛ ժամանակակից մեթոդներով, այսինքն՝ հնարավոր է մարդկային կապիտալի շնորհիվ թեքել այդ երկու հատվածների նժարը: Տնտեսության զարգացման հետ մեկտեղ անհետանում են արտադրության ավանդական եղանակները, բայց ոչ բուն արտադրանքը:

Անհրաժեշտ է նշել, որ տնտեսական աճին վերաբերող գործոնների հետազոտության սկզբնական փուլերում հեղինակները տնտեսական աճին նպաստող հիմնական գործոն են համարել արտադրողականության աճը, մյուսներին տալով երկրորդային նշանակություն[3]:

Ամերիկացի տնտեսագետի Մ. Քոփելանդն առաջարկել է տնտեսական աճի գործոնների վերլուծության արդյունավետության բարձրացման համար այդ գործընթացում ներառել ազգային հաշիվների մեթոդը և միաժամանակ կիրառել արտադրական գործոնների ռեսուրսատարության հաշվեկշիռը[4]:

Տնտեսագետներ Կոբի և Դուգլասի աշխատություններում որպես տնտեսական աճի գործոններ են ներկայացվում արտադրական ֆունկցիայի տարրերը, մասնավորապես՝ հեղինակային արտադրական ֆունկցիայի տարրերը[5] Նկատենք, որ ժամանակակից տնտեսությունը իր կառուցվածքով շատ ավելի բարդ է, քան նշված հեղինակների ուսումնասիրության ժամանակ, սակայն հետազոտության հիմնական սկզբունքները նույնն են:

Տնտեսագետ Տ. Աճեմօղլուն ևս տարբեր հետազոտություններում անդրադարձել է տնտեսական աճին՝ առանձին ուշադրություն դարձնելով մարդկային կապիտալին՝ որպես տնտեսական աճի վրա ազդող ամենաէական գործոններից մեկի[6]:

---

1 Das S., Mourmouras A., Rangazas P. C., Economic Growth and Development, A Dynamic Dual Economy Approach, Springer International Publishing Switzerland, 2015, 278p, p. 91-112

2 Lewis A. Development with unlimited supplies of labor. The Manchester Sch. 22: 1954, p92–139

3 Griliches Z., Journal of Economic Literature. Vol. 34, № 3, 1996, p. 1324-1330

4 Copeland M. A.,Concepts of National Income, in Studies on Income and Wealth, National Bureau of Economic Research, New York: Vol. 2, 1937, p. 10-48

5 Cobb C. W. Douglas P. H., A theory of production. American Economic Review: Supplement, Papers and Proceedings of the Fortieth Annual Meeting of the American Economic Association: 18(1), 1928, p. 139

6 D. Acemoglu, Introduction to Modern Economic Growth, Massachusetts Institute of Technology, Department of Economics, 2008, 739p. p. 463-502

Ռ. Լուկասը առաջարկում է տնտեսական աճի գործոնները բաժանել ըստ որակականի բնութագրեր ունեցողի և ըստ քանակական բնութագրեր ունեցողի: Ըստ նման մոտեցման, տնտեսական աճի քանակական գործոնները դրա վրա ազդում են խնայողության նորմի փոփոխության միջոցով, իսկ որակական գործոնները իրենց հերթին ազդում են ներդրումների արդյունավետության վրա[1]: Նման բաժանումը ունի մոնետարիստական տեսությանը հատուկ մոտեցում: Ժամանակակից տնտեսական հետազոտություններում մեծ նշանակություն է տրվում տնտեսական աճի բազմագործոն մոդելներին, որոնք կարող են ներառել 20-ից ավել գործոններ:

Մեթոդաբանություն: Ներկայացված հետազոտական աշխատանքում կիրառվել են վիճակագրական, վերլուծական, համեմատության և վերացարկման մեթոդները: Վիճակագրական մեթոդի օգնությամբ ստեղծվել է հետազոտության համար անհրաժեշտ տվյալների շտեմարան, վերացարկման մեթոդի միջոցով այդ տվյալներից առանձնացվել են առավել մեծ նշանակություն ստացածները, արդյունքները համեմատվել են տարբեր երկրների տվյալների հետ, իսկ վերլուծական մեթոդի օգնությամբ հետազոտվել են ընտրված էական գործոնները:

Վերլուծություն: Տնտեսական աճին նպաստող բոլոր գործոնները փոխկապակցված են, միաժամանակ բարդ է այդ գործոններից յուրաքանչյուրի ազդեցության չափը հստակ որոշելը: Սակայն որոշ բաղադրիչների պետք է տրվի ավելի մեծ կարևորություն, մասնավորապես պետք է ուսումնասիրության առարկա դարձնել այն գործոնները, որոնք ՀՀ տնտեսական աճի վրա դրական ազդեցության տեսանկյունից ունեն ամենամեծ ներուժը:

Տարբեր երկրները ունեն տնտեսական աճի ապահովման տարբեր ռազմավարություններ, և ելնելով դրանից իրականացնում են տարբեր քաղաքականությունները: Յուրաքանչյուր երկիր կարող է ունենալ իր տեսանկյուից նախընտրելի գործոնների խմբի վրա կենտրոնացվածություն: Արդյունքում տնտեսական աճի առավել բարձր տեմպեր են ունենում այն երկրները, որոնք կարողանում են ճշգրիտ գնահատականների և արդյունավետ հետազոտությունների շնորհիվ առավելագույն կենտրոնացվածությամբ օգտագործել իրենց տնտեսության համար ամենաէական ազդեցություն ունեցող գործոնների ներուժը: Այս բնութագրին համապատասխանող գործոններից ամենակարևորը ՀՀ-ի համար կարող ենք համարել մարդկային կապիտալը, մասնավորապես՝ կրթությունը և ուսուցումը՝ գիտական, տեխնոլոգիական և ռազմաարդյունաբերական ոլորտների զարգացվածությունը:

Տնտեսական աճի վրա կրթության ազդեցությունը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է առանձնացնել մի շարք որակական և քանակական տվյալներ, որոնք կհանդիսանան ցուցիչ, թե ինչքանով է պետությունը կարևորում այդ ոլորտը, և թե ինչ արդյունավետությամբ է իրականացվում ոլորտի զարգացումը: Ուսումնասիրելով գծանկար 2-ում ներկայացված տվյալները, տեսնում ենք, որ ՀՀ դպրոցական ընդգրկվածության ցուցանիշը ուսումնասիրվող երկրների ցանկում

[1] Lucas R., On the Mechanics of Economic Development, Journal of Monetary Economics, 1988, p. 21-23

ամենացածրն է, որը վերջին տասնամյակում ունեցել է անընդհատ անկման միտում: 2022. ՀՀ-ում կրթությանն ուղղված պետական ծախսերի մասնաբաժինը ընդհանուր պետական ծախսերում կազմել է 8.3%, որը 2010թ. սկսած ամենացածր ցուցանիշն է, մինչդեռ հարևան Վրաստանում այս ցուցանիշը կազմում է 11.3%, իսկ Ուկրաինայում 18.7%[1]:



Գծանկար 1. **Դպրոցական ընդգրկվածություն, հիմնական (ընդհանուրի %)[2]**

Նույն պատկերն է, եթե դիտարկենք կրթությանն ուղղված ծախսերը՝ որպես ՀՆԱ մասնաբաժին: ՀՀ-ն ուսումնասիրվող երկրների ցանկում ունի ամենացածր ցուցանիշը՝ 2.8%, մինչդեռ Ուկրաինայում այս ցուցանիշը գրեթե երկու անգամ ավելի բարձր է՝ 5.4%[3]: Նման մոտեցումը թույլ է տալիս ենթադրել, որ ՀՀ տնտեսական աճին նպաստելու քաղաքականությունն ուղղված է կարճաժամկետ նպատակների իրագործմանը, իսկ երկարաժամկետ և կայուն տնտեսական աճի վրա առավել մեծ ազդեցություն ունեցող կրթությունը համարվում է երկրորդային:

Այնուամենայնիվ անհրաժեշտ է ուսումնասիրել այլ գործոններ՝ համադրելու և ամբողջական պատկեր ստանալու համար:

Տնտեսական աճի տեսանկյունից մեծ նշանակություն ունեն նաև հետազոտություններին և զարգացմանը (R&D կամ Research and Development) ուղղված ծախսերը: Ուսումնասիրելով գծանկար 2-ը, տեսնում ենք, որ ՀՀ-ում R&D-ին ուղղված ծախսերը 1996թ. մինչև 2020թ. որպես ՀՆԱ մասնաբաժին չեն կրել էական փոփոխություն՝ տատանվելով 0.19-0.32%-ի շրջակայքում: Համեմատությունը ցույց է տալիս, որ ընտրված երկրների շարքում ՀՀ-ն ունի ամենացածր ցուցա-

---

[1] The World Bank data, Government expenditure on education, total (% of government expenditure) - Armenia, Georgia, Russian Federation, Belarus, Ukraine (reached on 02.02.2023, 16:20) https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GB.ZS?end=2021&locations=AM-GE-RU-BY-UA&start=2010

[2] The World Bank data, School enrollment, primary (% gross) (reached on 23.01.2023, 11:10) https://data.worldbank.org/topic/education?end=2021&locations=AM-GE-RU-BY-UA&start=2010

[3] The World Bank data, Government expenditure on education, total (% of GDP) - Armenia, Georgia, Russian Federation, Belarus, Ukraine (reached on 05.01.2023, 10:10)

նիշը: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ օրինակ Իսրայելում այդ ոլորտին ուղղված ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2020թ. գերազանցել է ՀՀ նույն ցուցանիշին ավելի քան 25 անգամ՝ կազմելով 5.44%, ինչպես նաև նախորդ ժամանակահատվածներում նույնպես ունեցել է անընդհատ աճի միտում: Նման պայմաններում այլ երկրների ունեցած հաջողությունները առանց այսպիսի ցուցանիշների հետազոտության տեղայնացնելը ՀՀ-ի համար չի կարող որևէ էական արդյունքի բերել, մինչդեռ ՀՀ-ում հաճախ է դիտվում նման մոտեցում:



Գծանկար 2. **Հետազոտության և զարգացման ծախսեր (ՀՆԱ-ի տոկոս) - Հայաստան, Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն, Բելառուս, Ուկրաինա, Իսրայել[1]**

Սակայն որոշ համախմբված ցուցանիշներ դիտարկելով կարող ենք տեսնել, որ ՀՀ վարկանիշը հուսադրող է: Օրինակ «United Nations»-կողմից ներկայացվող «Education index» ցուցանիշով ՀՀ-ն զբաղեցնում է 54-րդ հորիզոնականը՝ 0.749 գործակցով[2]:

Միաժամանակ նույն կազմակերպության կողմից ներկայացվող մարդկային զարգացման ինդեքսով (Human Development Index) ՀՀ-ն զբաղեցնում է 83-րդ հորիզոնականը՝ 0.755 գործակցով[3]: Այս ցուցանիշների ոչ համահարթ լինելը ցույց է տալիս, որ ՀՀ-ն ունի գիտական ներուժ, սակայն առկա են համակարգային կամ այլ բնույթի խնդիրներ, որոնք թույլ չեն տալիս իրացնել այդ ներուժը:

Տնտեսական աճին վերաբերող հարցերի տեսական քննարկումը և վիճակագրական տվյալների հիման վրա եզրակացություններ կազմելը կարող է բավարար չլինել ճշգրիտ տվյալներ ստանալու համար, մասնավորապես երբ հարցը վերաբերում է տնտեսական աճի և մարդկային կապիտալի միջև կապին, քանի որ այս գործոնը ներառում է ավելի շատ որակական, քան քանակական բնութագրեր:

---

[1] The World Bank data, Research and development expenditure (% of GDP) - Armenia, Georgia, Russian Federation, Belarus, Ukraine, Israel (reached on 25.01.2023, 13:10) https://data.worldbank.org/indicator/GB.XPD.RSDV.GD.ZS?end=2020&locations=AM-GE-RU-BY-UA-IL&start=1996&view=chart (reached on 31.01.2023, 14:00)

[2] United Nations Reports, List of countries by Education index, 2018, (reached on 24.01.2023, 13:25) https://rankedex.com/international-rankings-of-armenia,

[3] United Nations Reports, List of countries by Human Development index, 2018, (reached on 24.01.2023, 14:30) https://rankedex.com/international-rankings-of-armenia

Ուստի այս երկուսի կապին մաթեմատիկական տեսք տալը կարևոր է իրական կապի բացահայտման տեսանկյունից: Տարբեր ժամանակներում տարբեր գիտնականներ ներկայացրել են իրենց մոտեցումները այդ գործընթացի հետ կապված[1]: Այդ մոտեցումների հիման վրա համակարգված մի շարք մոդելներ են ներկայացված Դ. Աճեմօղլուի կողմից[2], որոնք հաշվի են առնում տարբեր գործոններ և թույլ են տալիս գնահատել արտաքին ազդեցությունները մարդկային կապիտալի վրա, ինչպես նաև դրա ազդեցությունը տնտեսական աճի վրա:

Որոշ տնտեսագետների կարծիքով մեծ կարևորություն ունեն մարդկային կապիտալի վրա արտաքին ազդեցությունները, որը կարող ենք կապել այն հանգամանքի հետ, որ քաղաքներում տնտեսական ակտիվության կենտրոնացումը հենց արտաքին գործոնների արդյունք է, և երբեմն այն դառնում է տնտեսական աճի շարժիչ ուժ:

Մարդկային կապիտալին և կրթությանը վերաբերող հարցերի քննարկումը կարևոր է նաև տարբեր երկրներում եկամտի տարբերության աղբյուրները բացահայտելու համար:

Մարդկային կապիտալի ազդեցության չափի գնահատման տեսանկյունից ընդունելի մոդելներից մեկի ընդհանուր տեսքը հետևյալն է[3]՝

$$(1)\quad \ln W_{j,m} = X'_{j,m}\beta + \gamma_p S_{j,m} + \gamma_e S_m,$$

Որտեղ $X_{j,m}$-ը ներկայացնում է կարգավորման վեկտորը, $S_{j,m}$-ը j անհատի m աշխատաշուկայում աշխատելու կամ ապրելու ընթացքում ուսանելու տարիների քանակն է, իսկ S_m-ը m աշխատաշուկայում աշխատողների ուսանելու միջին տարիների քանակը: Առանց վերջին գործոնը հաշվի առնելու հետազոտության արդյունքները կարող են մեծ շեղումներ ունենալ, սակայն դրա ներառումը թույլ է տալիս հաշվի առնել նաև պարբերաբար կամ անընդհատ կրթության գործոնը: Նմանատիպ մոդելների օգտագործմամբ տարբեր հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները թույլ են տալիս եզրահանգել, որ մարդկային կապիտալի՝ մասնավորապես կրթության և տնտեսական երկարաժամկետ աճի միջև կապը բավականին խորն է:

Ընդհանուր տնտեսական աճի տեսանկյունից 2022թ.-ին ՀԲ կանխատեսմամբ ՀՀ-ում սպասվում էր 3.5% տնտեսական աճ, որը սակայն 2022թ. հունիսի պրոյեկցիայով ճշգրտվելուց հետո աճել էր մինչև 7%[4]: Հղում կատարելով նույն աղբյուրին, նկատենք, որ ուսումնասիրվող երկրների շարքում, բացի ՀՀ-ից, միայն Վրաստանն է, որ ցուցանիշի ճշգրտումից հետո ունեցել է դրական ցուցանիշ, Ռուսաս-

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս Թեդ Շուլցի, Գարի Բեքերի, Ջեյքոբ Մինսերի, Յորամ Բեն Փորաթի, Մանուելլի և Սեշադրիի, Գուվենենի և Կուրուսկուի աշխատությունները

[2] D. Acemoglu, Introduction to Modern Economic Growth, Massachusetts Institute of Technology, Department of Economics, 2008, 739p. p. 463-502

[3] D. Acemoglu, Introduction to Modern Economic Growth, Massachusetts Institute of Technology, Department of Economics, 2008, 739p. p. 485

[4] The World Bank data, Europe and Central Asia country growth forecasts 2022 https://data.worldbank.org/

տանը, Ուկրաինան և Բելառուսը ունեցել են տնտեսական անկման կանխատեսում, որոնց շարքում ամենամեծ անկումը կանխատեսվել է Ուկրաինայի համար կազմել է -35%, որը մինչ հունիսի պրոյեկցիայով ճշգրտումը կազմում էր -45%: ՀՀ-ում ևս 2020թ. արցախյան պատերազմով և կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված տնտեսական անկում է գրանցվել -7.2%: Ուսումնասիրվող բոլոր երկրներում 2020թ. գրանցվել է տնտեսական անկում՝ ամենացածր անկումը գրանցվելով Բելառուսում՝ -0.9%:

Ակնհայտ է, որ 2022թ. ցուցանիշները պայմանավորված են ռուս-ուկրաինական հակամարտությամբ, որը ազդում է ամբողջ աշխարհի տնտեսական աճի վրա՝ առավել ակնառու ազդելով այդ երկրների հետ սերտ տնտեսական և քաղաքական կապեր ունեցող երկրների վրա: ՀՀ-ի վրա ևս այս գործընթացն ունի մեծ ազդեցություն: Չնայած, որ ըստ տնտեսական աճի 2022թ. կանխատեսված ցուցանիշների ՀՀ-ի տնտեսության վրա բացասական ազդեցություն չի նկատվում, այնուամենայնիվ չենք կարող արագ եզրակացություններ կազմել: ՀՀ տնտեսական աճի կանխատեսված ցուցանիշի դրական ճշգրտումը պայմանավորված չէ մեր կողմից ուսումնասիրվող մարդկային կապիտալի գործոնով, այլ առավելապես պայմանավորված է ՌԴ քաղաքացիների ներհոսքով: Նման գործոնով պայմանավորված տնտեսական աճը կարճաժամկետ ազդեցություն ունի, ինչը տեսանելի է նաև 2023թ. ՀՀ տնտեսական աճի կանխատեսման ցուցանիշում, որը կազմում է 4.3%:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում առկա է մարդկային կապիտալի մեծ ներուժ, մեղմելով վերը նշված արտաքին գործոնների ազդեցությունը հնարավոր է մեղմել կանխատեսելի և երկարաժամկետ ազդեցություն ունեցող այլ գործոնների շնորհիվ, որոնցից ամենակարևորը մարդկային կապիտալն է, սակայն առանձնակի ուշադրությամբ և անհրաժեշտ ծախսերով քաղաքականության բացակայությունը թույլ չի տալիս այն ներուժը կիրառելի դարձնել գործնականում:

Գիտական նորույթ: ԵԱՏՄ անդամ երկրների, կառույցին չանդամակցող՝ տնտեսական զարգացման հարաբերականորեն նույն մակարդակում գտնվող, պատերազմական գործողություններում ներգրավված և այդ երկրների հետ սերտ տնտեսական կապեր ունեցող, ինչպես նաև հարաբերականորեն անկախ երկրների տվյալների ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում հասկանալ մարդկային կապիտալի առանձնակի ազդեցությունը տնտեսական աճի վրա:

Եզրակացություն: Տնտեսական կայուն և երկարաժամկետ աճ ապահովող գործոններից ամենակարևորը կարող ենք համարել մարդկային կապիտալը: ՀՀ-ում մասնավորապես պետք է մեծ ուշադրություն դարձնել կրթությունը և ուսուցումը, գիտական, տեխնոլոգիական և ռազմաարդյունաբերական ոլորտների զարգացվածությունը: Պետական մակարդակում դրանց կարևորության մասին հաճախ լսելի է, սակայն տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործնականում ուսումնասիրվող երկրների շարքում ամենացածր ցուցանիշներն ունի ՀՀ-ն: Ուսումնասիրվող ժամանակահատվածը ներառում է կորոնավիրուսային համաճարակի, արցախյան պատերազմի և ռուս-ուկրաինական հակամարտու-

թյան ժամանակահատվածները: Հետևանքների մեղմմանն ուղղված քայլերի արդյունավետությունը, ինչպես նաև բացահայտել այն գործոնները, որոնք անկանխատեսելի կերպով ազդել են ՀՀ տնտեսական աճի վրա:

Ուսումնասիրելով բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների կողմից ներկայացվող մարդկային կապիտալի զարգացվածության աստիճանին վերաբերող ցուցանիշները, կարող ենք ենթադրել, որ ՀՀ-ն ունի գիտական ներուժ մեղմելու արտաքին գործոնների ազդեցությունը, սակայն առկա են համակարգային կամ այլ բնույթի խնդիրներ, որոնք թույլ չեն տալիս այն իրացնել:

Հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ տնտեսական աճի կանխատեսված ցուցանիշի դրական ճշգրտումը 2022թ. համար պայմանավորված չէ մեր կողմից ուսումնասիրվող մարդկային կապիտալի գործոնով: ՀՀ տնտեսական աճն առավելապես պայմանավորված է ՌԴ քաղաքացիների ներհոսքով դեպի ՀՀ, որը բնականաբար չի կարող երկարաժամկետ և կայուն արդյունքներ ունենալ, ինչը տեսանելի է նաև 2023թ. ՀՀ տնտեսական աճի կանխատեսման ցուցանիշում:

ՀՀ-ի հետ համեմատելի մի շարք բարձր և երկարաժամկետ տնտեսական աճ գրանցած երկրների տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ երկրների աճը պայմանավորում է հիմնականում երկու գործոններով՝ մարդկային կապիտալով և բնական ռեսուրսներով: Այս տեսանկյունից նախ ՀՀ-ն հարուստ չէ մեծածավալ բնական ռեսուրսներով, ինչպես նաև որոշ բնական ռեսուրսների արժեքը ունի անկման միտում՝ պայմանավորված նոր տեխնոլոգիաների շնորհիվ դրանց փոխարինիչներ ստեղծելով: Հետևաբար ՀՀ կայուն և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման ամենահեռանկարային գործոնը կարող ենք համարել մարդկային կապիտալը: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ մարդկային կապիտալում կատարված ներդրումների արդյունքը կարճաժամկետում տեսանելի չի լինի, սակայն ապագայում այն կապահովի բարձր տնտեսական աճ:

Օգտագործված գրականության ցանկ

References

1. Acemoglu D., Introduction to Modern Economic Growth, Massachusetts Institute of Technology, Department of Economics, 2008, 739p.
2. Das S., Mourmouras A., Rangazas P. C., Economic Growth and Development, A Dynamic Dual Economy Approach, Springer International Publishing Switzerland, 2015, 278p.
3. Lewis A. Development with unlimited supplies of labor. The Manchester Sch. 22: 1954, p92–139
4. Luzgina A. Monetary Policy in Belarus since the Currency Crisis 2011, October 8, 2012. freepolicybriefs.org
5. Cobb C. W. Douglas P. H., A theory of production. American Economic Review: Supplement, Papers and Proceedings of the Fortieth Annual Meeting of the American Economic Association: 18(1), 1928, p. 139
6. Copeland M. A.,Concepts of National Income, in Studies on Income and Wealth, National Bureau of Economic Research, New York: Vol. 2, 1937, p. 10-48

7. Griliches Z. Journal of Economic Literature. Vol. 34, № 3, 1996, p. 1324-1330
8. Lucas R. On the Mechanics of Economic Development, Journal of Monetary Economics, 1988, p. 21-23
9. Ostroukh, Number of Russians Living in Poverty Rises, WSJ, March 21, 2016 https://www.wsj.com/articles/number-of-russians-living-in-poverty-rises-1458581478
10. The World Bank data Inflation, consumer prices (annual %) https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005
11. The World Bank data https://data.worldbank.org
12. The National Institute of Open Schooling (NIOS), Economic Growth And Economic Development, Current challenges before the Indian Economy, MODULE 2, 2019, 12 p. https://nios.ac.in/media/documents/SrSec318NEW/318_Economics_Eng/318_Economics_Eng_Lesson3.pdf
13. United Nations Reports, List of countries by Education index, 2018, https://rankedex.com/international-rankings-of-armenia

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ. ՀՀ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արսեն Սլավիկի Ըռքոյան
Լևոն Աշոտի Հովնանյան

Համառոտագիր: Մարդկային կապիտալի ուսումնասիրությունը և վերլուծությունը մեծ կարևորություն ունի նաև ՀՀ տնտեսական զարգացումն ապահովելու գործում, հետևապես այն խիստ ***արդիական*** է: Հետազոտական աշխատանքի ***նպատակն է*** մարդկային կապիտալը ներկայացնել որպես գործոն, որը ՀՀ տնտեսական աճի վրա առավել մեծ ազդեցություն ունի, և որ այդ գործոնի վրա կենտրոնացումը ՀՀ-ին կարող է տալ հարաբերական առավելություններ: Այդ նպատակի իրականացման համար ***խնդիր է դրվել*** հետազոտել ՀՀ և տարածաշրջանային մի շարք երկրների մարդկային կապիտալին վերաբերող ցուցանիշները և բացահայտել դրանց ազդեցության չափը տնտեսական աճի վրա, վերլուծել դրանք՝ արդյունքում ստանալով քանակական և որակական գնահատականներ

Իրականացված ուսումնասիրության ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ իրականացված ուսումնասիրությունում ներառված ԵԱՏՄ անդամ երկրների, կառույցին չանդամակցող, սակայն տնտեսական զարգացման հարաբերականորեն նույն մակարդակում գտնվող երկրների, պատերազմական գործողություններում ներգրավված երկրների, այդ երկրների հետ սերտ տնտեսական կապեր ունեցող, ինչպես նաև հարաբերականորեն անկախ երկրների տվյալների ուսումնասիրությունը, ինչպես նաև ավելի վաղ տվյալների ներառումը ուսում-

նասիրությունում նոր հնարավորություն է ստեղծում հասկանալ մարդկային կապիտալի առանձնակի ազդեցությունը տնտեսական աճի վրա՝ կապելով դա վերը նշված գործոնների հետ, ինչպես նաև դիտարկելով դրանցից անկախ:

Հետազոտության ընթացքում դիտարկված երկրների և ՀՀ տնտեսական աճի վրա ազդող մարդկային կապիտալի գործոնի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ն վերջին երեք տասնամյակներում առանձնակի առաջընթաց չի գրանցել ցուցանիշների բարելավման տեսանկյունից, ինչպես նաև պետական մակարդակում մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված ծախսային մասնաբաժինը չի ավելացել, մինչդեռ ուսումնասիրվող մյուս երկրներում այն ունեցել է աճի միտում, կամ ի սկզբանե եղել է ավելի բաձր, քան ՀՀ-ում: Միաժամանակ պետք է նշել, որ այդ ցուցանիշների հետագիծը և տնտեսական ընդհանուր բնութագրերը թույլ են տալիս եզրակացնել, որ ՀՀ-ն հնարավորություն ունի ապագայում ձեռք բերել տեսանելի առավելություններ: Այս հնարավորությունների առավելագույն արդյունավետությամբ օգտագործումը թույլ կտա ապահովել ՀՀ ***տնտեսության առավել կայուն աճ՝*** միաժամանակ ապագայում հնարավորություն կստեղծի **առավել արագ և արդյունավետ հաղթահարել չկանխատեսված ցնցումները, որոնք տնտեսության վրա բացասական հետևանք ունեն:**

Բանալի բառեր. տնտեսական աճ, մարդկային կապիտալ, կրթություն, գիտական ներուժ, տնտեսական զարգացում, կայուն աճ, տնտեսական առավելություն, բարձր արդյունավետություն:

ВЛИЯНИЕ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА НА ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ. СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ РА И СТРАН РЕГИОНА

Арсен Славикович Эркоян
Левон Ашотович Овнанян

Аннотация. Изучение и анализ человеческого капитала также имеет большое значение в обеспечении экономического развития РА, поэтому он очень актуален. Цель исследования состоит в том, чтобы представить человеческий капитал как фактор, который оказывает наибольшее влияние на экономический рост РА, и что сосредоточение внимания на этом факторе может дать относительные преимущества РА. Для достижения этой цели была поставлена задача исследовать показатели, относящиеся к человеческому капиталу РА и ряда стран региона, и определить степень их влияния на экономический рост, проанализировать их, получив количественные и качественные оценки.

Научная новизна проведенного исследования заключается в том, что изучение данных стран-членов ЕАЭС, не входящих в структуру, находящихся относительно на одном уровне экономического развития, участвующих в военных действиях и имеющих тесные экономические связи с этими странами, а также относительно

независимых стран, создает возможность понять особое влияние человеческого капитала на экономический рост.

Анализ фактора человеческого капитала, влияющего на экономический рост рассматриваемых в ходе исследования стран и экономический рост Республики Армения, показывает, что Республика Армения не добилась большого прогресса в плане улучшения показателей за последние три десятилетия, и доля расходов на развитие человеческого капитала на государственном уровне не увеличилась, в то время как в других исследованных странах была тенденция к увеличению, либо она изначально была выше, чем в РА. В то же время следует отметить, что траектория этих показателей и общеэкономические характеристики позволяют сделать вывод о том, что РА имеет возможность получить видимые преимущества в будущем. Максимально эффективное использование этих возможностей позволит нам обеспечить **более стабильный рост экономики** РА, а в будущем создаст возможность **более быстрого** и **эффективного преодолевания непредвиденных потрясений, оказывающих негативное влияние на экономику**.

Ключевые слова: экономический рост, человеческий капитал, образование, научный потенциал, экономическое развитие, устойчивый рост, экономическое преимущество, высокая эффективность.

THE IMPACT OF HUMAN CAPITAL ON ECONOMIC GROWTH: COMPARATIVE ANALYSIS OF RA AND REGIONAL COUNTRIES

Arsen Slavik Erkoyan
Levon Ashot Hovnanyan

Abstract. The study and analysis of human capital is of great importance in ensuring the economic development of RA, therefore the topic of its analyses is very ***relevant***. The ***aim*** of this research is to present human capital as a factor that has the greatest impact on RA economic growth, and that focusing on this factor can provide RA with relative advantages. In order to achieve that goal, the ***task*** was set to study the indicators related to the human capital of RA and a number of regional countries and to determine the extent of their impact on economic growth, to analyze them - resulting in quantitative and qualitative evaluations.

The scientific ***novelty*** of the conducted study is the following: the analysis of the data of EAEU member countries, non-members of the structure, which are relatively at the same level of economic development, involved in military operations and have close economic ties with these countries, as well as relatively independent countries, creates an opportunity to understand the special impact of human capital on economic growth.

The analysis of the human capital factor impacting the economic growth of the countries considered during this research and the economic growth of the Republic of Armenia shows that our country has not made much progress in terms of improving

indicators in the last three decades, and the share of expenditure on the development of human capital at the state level has not increased, while in the case of the other studied countries countries, that expenditure has a tendency to increase, or from the beginning they were higher than in RA. At the same time, it should be noted that the trajectory of these indicators and general economic characteristics allow us to conclude that RA has the opportunity to gain visible advantages in the future. The maximum effective use of these opportunities will allow us to ensure more stable economic growth for RA, while in the future it will create an opportunity to overcome unforeseen shocks that have a negative impact on the economy more quickly and effectively.

Keywords: economic growth, human capital, education, scientific potential, economic development, sustainable growth, economic advantage, high efficiency.